*գրաւ հատուցանօղ, և ո՛չ ոք պահանջօղ, նա՛ ես 24 միլիոն հոգիք ստանալով ազատութիւն անձանց, արձակութիւն ընդ ամենայն գործս հաստատութեամբ և տէր լինելով 'ի վերայ ամենայն ընչից իւրեանց՝ իբր թագաւոր իւրաքանչիւր անձինք ընկալնալով այսքան բարութիւն 'ի տանէ և 'ի պաշտօնատարացէ իւրեանց իւրաքանչիւրոք 'ի տարեկան հատուցանելով միմիայն մի դահեկան երծաթ, իբր ծաղիկ մի շնորհակալութեան, և գին աղից ծախելոց իւրոյ մի՛ լինիցի ծանդր, զի 'ի վերայ իւրաքանչիւր անձանց համարի փի չորս Օրէն մի դահեկան պղնձոյ, այլ ես կարի կարգադրել 'ի վերայ հարստից և աղքատաց ըստ կարողութեանց հատուցանօղաց:*

Ակնարկութիւն 'ի վերայ տարեկան եկամտից եւ ծախուց տանն հայոց:

## ԳԼՈՒԽ ԾԻ.

| | |
|---|---|
| *'Ի 519 երորդ Օրէնս մեր եկամուտն տանն հայոց բովանդակի դահեկան երծաթ . .* | *132,000,000* |
| *'Ի 278 երորդ Օրէնս գումար տարեկան ծախուց տանն հայոց բովանդակի երծաթ . . .* | *12,370,020* |

*Զոր հանեալ 'ի եկամտէ մնա-*